Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ 15.07.2022թ. ժամը 11.00

Նախագահում էր Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 9 անդամներից 6-ը:

Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին մարզի իրավապահ մարմինների ներկայացուցիչները, Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարը, վարչությունների ու բաժինների պետերը, մարզպետի օգնականները, Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար Գևորգ Մխեյանը, ստորաբաժանման բաժանմունքների պետերը, ավագ մասնագետը, մարզի համայնքների ղեկավարների տեղակալները, համայնքների բնակավարերի վարչական ղեկավարները:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման 2022 թվականի 1-ին կիսամյակի արդյունքների մասին:
   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2022 թվականի գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին:
   /Զեկ. Մարտին Պետրոսյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքապետարաններում համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման մասին:
   /Զեկ.Վանիկ Հարությունյան - մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

4. Այլ հարցեր:

Հայտարարություններով հանդես եկան՝

Արմեն Զոհրաբյանը	- Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Մարատ Ղուրշուդյանը	- Գեղարքունիքի մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի պետ
Բենիկ Սարգսյանը	- Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանման զորահավաքային բաժանմունքի պետ
Դավիթ Վարդանյանը	- Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ավագ մասնագետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Կարեն Սարգսյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2022 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ուղղությամբ՝ սեփական եկամուտների համամասնություններով պահանջվող ցուցանիշներն ապահովելու համար.

2) մարզպետարան տեղեկատվություն ներկայացնել համայնքներում մեծ մակերեսով խոտհարքներ և արոտավայրեր վաճակալած, սակայն ոչ նպատակային օգտագործող և ներդրումային ծրագրեր չներկայացրած վարձակալների հետ կնքված վարձակալական պայմանագրերի՝ սահմանված կարգով լուծելու վերաբերյալ:
Նոր վարձակալական պայմանագիր կնքելիս հաշվի առնել համապատասխան անասնագլխաքանակի առկայությունը.

3) համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության տրամադրելիս խստորեն պահպանել ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի N 16-Ն որոշման պահանջներն, ըստ որի նշված հողամասերը վարձակալության տրամադրելիս պարտադիր պահանջ է մարզպետի գրավոր համաձայնությունը.

4) սերտորեն համագործակցել Գեղարքունիք ՋՕ ընկերության հետ, համատեղ աշխատանքի ընթացքում արձանագրել ջրովի մշակաբույսերի իրական մակերեսները, համադրել կնքված պայմանագրերում առկա մակերեսների հետ և աջակցել ջրօգտագործման վարձավճարների հավաքագրման գործընթացին.

5) համագործակցելով Գեղարքունիքի մարզպետարանի և ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության հետ՝ ուշադրության կենտրոնում պահել համայնքների վարչական տարածքներով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների եզրերին՝

ա) խաչերի, խաչքարերի և այլ հուշարձանների առկայության օրինականության ուսումնասիրման և առանց թույլտվության նորերի կառուցման ու տեղադրման գործընթացը,

բ) արտադրական և այլ աղբի տեղադրման, հողալցման ու հողհարթեցման աշխատանքների օրինականության հսկողության և ապօրինի շինարարական գործունեության կանխարգելման գործընթացը.

6) մարզի համայնքներում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների կատարման որակի և դրանք սահմանված ժամկետներում ավարտելու նկատմամբ հսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով համայնքապետարաններում ստեղծել մասնագիտական խմբեր՝ պատասխանատու ստորաբաժանումներին աջակցելու համար.

7) գույքագրել մարզի հանքավայրերը շահագործող /ուսումնասիրության կամ արդյունահանման լիցենզիաներով աշխատող/ տնտեսավարողներին, ճշտել նրանց գործունեության օրինականությունը՝ ընդերքօգտագործման թույլտվությունների, հողօգտագործման պայմանագրերի առկայության, գործունեության ժամկետների ու հողերի կատեգորիաների համապատասխանության վերաբերյալ և տեղեկատվություն ներկայացնել Գեղարքունիքի մարզպետարան.

8) 2022 թվականի օգոստոսի 1-ից նախատեսվող վարժական հավաքները լիարժեք կազմակերպելու և անցկացնելու նպատակով հանձնարարել համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարներին ապահովել մասնակիցների ծանուցումները և վերահսկողություն սահմանել այդ գործընթացի նկատմամբ.

9) հանձնարարել համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարներին՝ 2022 թվականի եռամսյա վարժական հավաքների ընթացքում ապահովել զորակոչի ենթակա զինապարտների հավաքագրման ցուցանիշները, վերահսկողություն սահմանել այդ գործընթացի նկատմամբ և գործընթացի ավարտին՝ ըստ համայնքների բնակավայրերի տեղեկատվություն ներկայացնել Գեղարքունիքի մարզպետարան /ներկայացնել առձեռն/.

10) բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը արդյունավետ կազմակերպելու նպատակով համայնքապետարաններում ինքնասպասարկման տերմինալներ տեղադրելու համար առանձնացնել տարածքներ և հայտարարել մրցույթներ:

2. ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ Գևորգ Գալստյանին՝ իրականացնել իրազեկումներ հակահրդեհային անվտանգության կանոններն ապահովելու վերաբերյալ:

3. Գեղարքունիքի մարզպետարանի ՖՍՏՋ վարչության պետ Յուրա Մուշեղյանին և ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Վանիկ Հարությունյանին՝ կազմել ժամանակացույց մարզպետարանի համապատասխան մասնագետների կողմից մարզի համայնքապետարաններ այցելելու և համայնքների 2022 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման գործընթացին մեթոդական աջակցություն ցուցաբերելու համար:

21.07.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ